

և ոչ մի քահանայ չկայ ժողովրդի հոգևոր պետքերը լցուցանելու համար։ Հաւատադիտութիւնները և լիցիատութիւնները օրէցօր աւելանում են, եկեղեցիները տաճկաց մկրիթների են փոխուել, և տաճիկները որ ձեռք են ձգել նոցա բնակիչները այլևս ետ չեն դարձնում։

Անի գիւղերում եղած կոտորածի ժամանակ հոկտեմբերի 27-ին կողոպտել, պղծել և աւերել են ս. Փրկչի վանքը։ Լիճք, Նաբիէր, Աղնի գիւղերի եկեղեցիները աւերուել են և կողոպտուել։ Այս գիւղերի բոլոր հայ ժողովրդեան առաջարկել են մահմեդականութիւն ընդունելու։ Լիճք գիւղի բնակիչները ստիպուած են եղել ընդունելու այդ առաջարկը, ինչպէս նաև նոցա քահանաները։

Ալրիստան գաւառի Եարբուզ գիւղում, ինչպէս նաև Կոկիսունում, բնակիչների մեծ մասն սպանուել է, շատերը խլամութիւն են ընդունել։

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։ Յուսանք որ Տէրը իւր եկեղեցու համար զօժուածների բարեխօսութեամբ կը դիմայ մնացելոց վրայ, և քրիստոնէայ պետութեանց, մանաւանդ մեծագոր Ռուսիոյ, աղիւցութեամբ վերստին խաչի պաշտօնը կրկնականգնի ամենուրեք ուր մահմեդական մոլեռանդութիւնը այդ ջրնջել է ջննացել։

ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Տեսողնդառաջի օրը, Անհափառ Հայրապետի հրամանաւ Գեր. Կարապետ եպիսկոպոսը կուսակցօն քահանայ ձեռնադրեց Ս. Էջմիածնի միաբան շնորհունակ Վահան և Ռաիսայէլ սարկաւազներին, վերակոչելով նոցա Կորնէն և Մամբրէ։

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ.

ՏԱԹԵՒԻ ՎԱՆԷՐԸ. 1

Միւնիքի Ծղուկ գաւառի Դադրէլ լիւթան ըստորաւում ուր սարի բարձունքից լայնանիստ կողերէ զտրվայրով իջնող խոխոմածիգ ձորերը միանում մի դարաւանդ ժայռ են կազմում, ուղիղ Որոտայ ահլղ անդունդի գլխին, կանգնած է այժմ Տաթեւի հօշակաւոր վանքը, Միւնեաց նախնի փառքի ամայի և խօսուն յուշարձանը։

Մի քանի խօսք այդ Մնաստանի անցելայն մասին։ Տաթեւի այժմեան նուիրական վայրերը բոլոր մասերով կառուցուած են Թ. և Ժ. դարերում, երբ Միւնեաց վարդապետարանի ներքին և արտաքին բարգաւաճումն կանոնաւոր հիմքերի վրայ դրուեցաւ։ Սակայն ժողովրդական աւանդութիւնն ընծայում է նորան պատկառելի հնութիւն՝ թագցնելով նորա ծագումը առաքելական դարու անյայտութեան մէջ, իսկ պատմութիւնը վերապահել է նորան գործունէութեան մի փառաւոր շրջան, որի սկիզբն է Կ. և վախճանը Ժ. Բ. Բ. դարը, Պատմական այդ ընդարձակ ասպարիզի վրայ Տաթեւը

հօշակ ստացաւ իւր միաբանական ուխտով, փանական կազմակերպութեամբ, բաղմամբիւ բարեգործական հիմնարկութիւններով և առաւել ևս իւր վարդապետարանով ուր ձոնամատոյց և անյաղձ փիլիսոփաներ, «անհամեմատ» գրիչներ, «վարդապետական կրթութեամբ» ձօնացած գիտուններ, «արհեստաւոր» նկարիչներ և «երգոց» երաժիշտներ համախմբած նուիրարեւում էին իրենց անձնաղիր վաստակների արգասիքը հայ ժողովրդին և հայ եկեղեցուն։ Մի կողմից քրիստոնէական մաքուր կեանքի պարզութեամբ ժողովրդին ջերմեռանդ հաւատոյ և օրոյ կենդանի օրինակ տալ, միւս կողմից գիտութեան և աւետարանական լուսոյ կանթեղը յարատւ վառ պահել՝ հայ հօտի կրթութեան և յառաջագիմութեանը նպաստելու—ահայս կրկնակի կոչմանն է նուիրուել ընդ միշտ Տաթեւի վանքը։

Բայց թէ ո՞րքան բեղմնաւոր եղաւ Միւնեաց ուխտն իւր այս կոչմամբ, ինչպիսի բարիքներ բերաւ հայ աղգի համար, վիայում և խօսում են այդ մասին բաղմամբիւ իրողութիւններ, որոնք կապուած են Տաթեւի անուան հետ և ընդգրկում են յաջորդաբար մի քանի դարերի պատմութիւն։

Եւրդ դարից սկսած, երբ հայ աղգը հղօր դրացիների յարձակումներից խապառ ուժամարի, իւր ներքին ամբուլթիւնը որոնում էր եկեղեցւոյ հովանու տակ, և յաճախ ստիպուած էր կրօնական վտանգաւոր մաքառման մէջ մտնել յանուն այդ եկեղեցւոյ անարատութեան՝ արեւմտեան քրիստոնէաների նենգ հրապոյրների դէմ, որոնք հաւատոյ և խղճի աղատութեան փաճառման գնով միայն հայերին օգնութեան ձեռք մեկնելու յոյսեր էին տալիս, Տաթեւն էր այն կենդրոնը, որտեղից Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութեան բաղմամբիւ ջատագովներ հանդէս եկան և հայի հաւատը, հայի խղճի աղատութիւնը պաշտպանեցին, Բաղկեղոնականութեան դէմ մղած դարաւոր պայքարի առաջնորդները Միւնեաց վարդապետներն էին, որոնք իրենց պատրաստութեամբ, ս. Գրքի գիտութեան պաշարով աջակցում էին հայրապետներին, խորհուրդներ տալիս, մեկնում և բացատրում եկեղեցւոյ ուղիղ դաւանանքը, նախադահում աղգային ժողովներում, պատրաստում նախարարներին և ժողովրդին բարոյապէս՝ անվեհերութեամբ դիմադրելու այն բոլոր արտաքին հօտանքներին, որոնք կարող էին փոքր ինչ արատաւորել Հայոց եկեղեցւոյ առաքելական օգին և շարժել նորա անկախութեան և ինքնուրոյնութեան հիմունքը։ Պետրոս, Վրթմանէս, Մաթեոսաղա, Ստեփաննոս և այլք՝ որոնք յայտնի են իբրեւ գլուխ ամենայն

1. Հոշակաւոր վանքիս լոցացած հազարամեակի առթիւ հրատարակուած ենք նրա անցեալ եւ այժմեան վիճակի այս համարոտ նկարագիրն ու պատկերը։

վարդապետաց Հայոց ի վերայ բարձու ահարկու ամբիոնի բարունարանին Սիւնեաց», եկեղեցական պատմութեան այդ շրջանի քաջամարտիկ հերոսներն էին, որոնք օտարների առաջ յաղթութեան պակ էին հիւսում. Հայոց եկեղեցւոյ գլխին, անշարժ պահելով նորա հաւատոյ հիմքը, որի համար և պատմութիւնն անուանում է նոցա «սիւն երկրի», «խարխիս հաւատոյ», «վեմն անդրգուկի», «խոյսեան եկեղեցւոյ», Սահայն սոցա փառքը նոսմանում է ժ.Գ. և ժ.Դ. դարերի տաթևացւոց առաջ, որոնց վիճակուած էր սկզբում՝ մինչ հրոսախ թաթարների ոտքի տակ աւերուում էր բուն Հայաստանը և արեւմուտքում Ռուբինեանց գահը երկրում, կոռւել պապական և կաթողիկոսոս դէմ, որի խրմորը վաղուց արդէն Ալիկիկայումն էր զանգուած հայ իշխանների և օտարամոլ հայ եկեղեցականների ունեց ձեռնտուութեամբ և որ, մուտ գործելով հետզհետե Հայաստան՝ վտանգ էր սպառնում Հայոց եկեղեցւոյ ինքնուրոյնութեանը, և ապա լատինների ունիթորական հոսանքի դէմ, որ կարճ ժամանակում ողողեց Հայաստանը, երկպառակեց Հայոց հօտը, բաժանեց հայ եկեղեցականների միութեան ոյժը, Ահա այդ ժամանակ միակ Սիւնեաց վարդապետարանն էր՝ որ քաջ և արթուն հովիւների բանակներ ուղարկեց դէպի ամեն կողմ Գրիգոր Տաթևացու և աշակերտների առաջնորդութեամբ, որոնք արթնութեամբ պահպանեցին հօտը օտարների հրապոյրներից և ազգային եկեղեցունախանձամոլորութեամբ վառուած, խօսքով ու գործով չեզոքացրին ունիթորների ազդեցութիւնը:

Ժամանակի և մարդոց աւերիչ ճանկերից ազատուած Տաթևի այժմու հնութիւններից մեծ մասը՝ ս. Պետրոս և Պօղոս առաքելների տաճարը, Գաւաղան կոչուած զարմանալի սիւնը, որ հազար տարի անցնելուց յետոյ տակաւին ճոճուում է շարժման թեթեւ դարկով, շրջապատի հաստահիմն պարիսպները և այլ բազմաթիւ հիմնարկութիւններ, որ պատմիչը «համարանոց»՝ «գետնափոր», «սրբատուն», «տրապէզ», «գրատուն», «տուն աղօթից» է անուանում, Թ. դարու գործ են համարուած, Երարական ճնշումներից յետոյ երբ վերանորոգուեցաւ Հայաստանի քաղաքական կեանքը Բագրատունեաց հարստութեամբ, Հայոց վանքերն էլ յառաջդիմութեան նոր քայլ արին հետզհետե ներքին և արտաքին բարգաւաճման դիմելով, վանական և միաբանական կեանքը նոր ի նորոյ վերընթիւղեց և մի նոր մտաւոր շարժումն յառաջ բերու, որին հաւասարապէս նպաստում էր եկեղեցական դասը իւր կրթութեամբ ու գիտութեամբ, ժողովուրդը առատաձեւն տուրե-

րով իշխանական դասը քաջաւերող հովանաւորութեամբ և գործին ջերմ մասնակցութեամբ, Ահա այդ շրջանին են վերաբերում բազմաթիւ վանքերի շարքում և Սիւնեաց եպիսկոպոսարանի ներքին և արտաքին բարգաւաճումը, 839 թ.՝ Ստեփաննոս Օրբելեանի վկայութեամբ, Տաթևը ներկայացնում էր մի խրթին եկեղեցի «անտաշ վիճօք կրաշաղխ ձուլեալ, յոյժ ի հին ժամանակաց, յաւուրց անտի սրբոցն ներսիս և Սահայոյ, և սակաւ կրօնաւորք մշտաջան ձգնութեամբ բնակէին ի նմա և էր տեղին հեռի յամենայն հինից թշնամեաց, զի միջոց էր աշխարհին, յանքոյթ և ի զառանց տեղի, և ամրացեալ ի ժէջ երկուց արքունական գահոյիցն Սիւնեաց և Բագաց», Բայց շնայելով այս անշքութեան, մի կողմից վանքի հնութիւնը և նուիրական օրրութիւնները, միւս կողմից վարդապետարանի փառաւոր անցեալը և նախկին գահակալների անուան հետ կապուած անցեալ բեղմնաւոր գործունէութիւնը բարձր էին պահել Տաթևի նշանակութիւնը Սիւնեաց ժողովրդի և նախարարների աչքում, որոնք և Թ. և ժ. դարերում ենթարկուելով ժամանակի տիրող հոսանքին և զգալով վանքերի և միաբանական կեանքի անհրաժեշտ կարիքը Հայոց եկեղեցու շահերի և հայ ժողովրդի մտաւոր և հոգեւոր վերածնութեան նկատմամբ, ոչ մի բարոյական և նիւթական միջոց չխնայեցին և իրենց բարձր հովանաւորութեամբ բարեկարգեցին Տաթևն ըստ ամենայնի՝ մրցելով այլ նախարարների հետ, որոնք Հայաստանի զանազան մասերում հովանաւորում էին այլ վանքերի, Երդէն 894 թ. Սիւնեաց Եւոտ Մեծի իշխանութեան և Տ. Յովհաննէս եպիսկ. առաջնորդութեան ժամանակ, Սիւնեաց մեծերի և իշխանազուն տիկնանց ու օրիորդների Տաթևին բնծայաբերած դիւղերն ու աւանները, հանդերն ու այգիները այնքան բազմաթիւ էին, որ կարող էին մի քանի գաւառներ շուրջ սահմանափակել, Բսկ նիւթական ապահովութիւնից կախուած էր և վանքի բարոյական վերաշինութիւնը, ժամանակի պահանջից մղուելով և օգտուելով նպաստաւոր պայմաններից, 895 թ. Յովհաննէս եպիսկոպոսը ձեռնարկեց Տաթևի շինութեան գործին և 11 տարուան ընթացքում աւարտելով հիմնարկած Վայք Տաճարն ու միաբանական կեանքի և գիտնական գործունէութեան անհրաժեշտ կարիքների համար նախապատրաստութիւն տեսնելով հիմք դրեց այն արդիւնաւոր միաբանութեան որի մասին պատմիչը հետեւեալն է ասում. «Եւ պայծառանայր քահանայական և կրօնաւորական դասուք ի չափ հինգ հարիւր եղբարց. լի էր և ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ձօխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբ»:

(Շարունակելի)

Նրիցակ.

Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Ք
ՍԱԼՄԱՍՏԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ
1895 թ.

	Գիւղի անուն. Զ. գիւղը զուտ հայաբնակ կը նշանակէ.	Ամուսնացած		Զաւակ 1-7 տըք.		Զաւակ 8-14 տըք.		Զաւակ ամուսին 15 տըքէն վեր		Գումար	Տոն	Պանդուխտ
		Այր	Կին	մանչ	աղջիկ	մանչ	աղջիկ	կին	այր			
1	Հովթուան (գ.)	403	495	184	194	178	114	160	11	1739	310	268
2	Փայտառուկ (գ.)	279	364	121	104	120	91	125	8	1212	226	240
3	Սահլամ (գ.)	20	274	114	122	59	35	79	6	898	176	157
4	Սափրա	149	200	68	61	32	28	74	17	629	109	190
5	Սանամէրիկ	124	144	105	97	49	34	31	2	586	81	72
6	Սառնա (գ.)	95	124	60	37	37	30	45	2	430	74	86
7	Հին-քաղաք	91	116	68	46	27	36	32	2	418	62	71
8	Ղալասար (գ.)	80	117	72	72	29	20	43	4	437	59	79
9	Ախթիսանա	79	93	38	32	44	18	32	1	337	46	59
10	Հախիւրան (գ.)	72	81	43	39	23	10	22	1	261	46	45
11	Կշլճա	56	71	42	40	21	13	7	1	251	41	26
12	Վաւառն	58	71	43	44	18	9	19	6	268	40	37
13	Քապիկ	49	51	33	29	17	8	11	2	200	28	19
14	Քալաշան	35	41	17	18	14	11	11	3	150	25	21
15	Այան	33	34	27	14	13	5	14	1	141	22	18
16	Ղարիշիկ	30	37	19	22	14	11	9	2	144	22	12
17	Խոսրոփայ	24	36	15	11	13	5	13	—	117	23	13
18	Ասլանիկ	19	27	12	10	12	4	6	2	92	14	10
19	Շէյթանաւա	18	26	19	17	14	3	10	—	107	21	6
20	Ճարա	16	19	10	5	4	2	9	1	66	12	11
21	Քեօշամիշ	16	19	13	16	8	3	5	—	80	12	8
22	Իւլա	14	19	2	4	8	4	9	1	61	14	14
23	Զիվէճուկ	14	16	10	13	6	4	8	1	72	9	12
24	Բախաւա	15	23	20	10	7	2	—	4	81	8	7
25	Հմբանաւա	15	16	10	12	3	1	5	—	62	9	7
26	Հովատար	10	12	9	7	8	3	—	—	49	7	—
27	Շիտան	7	7	6	5	1	—	—	—	26	5	—
28	Աղ-իսմայիլ	2	2	4	2	1	1	1	—	13	2	—
Գումար		2012	2535	1184	1083	780	505	780	78	8957	1504	1488

Բ Ա Յ Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Սալմաստի հայաբնակ գիւղերի (որոնցից 6-ը զուտ հայ) թիւն է	28
Հայ ընտանիքների թիւը	1504
Հայ անձերի	8957
Սալմաստեյի հայ պանդուխտների թիւը (բացառապէս ի Ռուսիա)	1488

Անձերի թիւը հետեւեալ կերպով կը բաշխուի.

	Ար. սեռ	Իգ. սեռ
Ամուսնացածներ	2012	2535
Զաւակ 1-7 տարեկան	1184	1083
« » 8-14 « » (գաղութական հասակ)	780	505
« » 15-էն վեր ամուսին	780	78

$$4756 + 4201 = 8957$$